

քո բաժինն ու միջանակ միայն խա-
չըն է :

Խոսի դու, ո՛վ ազգային վարչութիւն,
մի զարմանար թէ այսպիսի վշտահար
եղած կողքում և յոյժ տրտմեալ եմ
Տարնոյ վանից դռմենէն վերայ,
յորա երբէք չեղէք աշխատ և մէկ
չնայ չորացուցիք, թէ ոչ այսօր վա-
ղը պիտի խեղամուս ինքնին թէ այս
խնդրոյն մէջ առանց նախատեսու-
թեան վարուեցար. ներողութիւն կը
խնդրեմ, մի՛ զայրանար թէ ասեմ
խորհրդով չվարուեցար, աճապարա-
նօք խորհեցար, իրիկունը որոշեցիր,
առաւօտուն վաղ քաջ կոնդակն բա-
տարադրուեցաւ. դու չգիտեմ հա-
ւատացի՞ր կամ քեզ հաւատացուցի՞ն
թէ կարող ես հնու(թեամբ)հնութիւն
վերանորոգել. դու չգիտեմ որ հին և
անձուկ դադարեալներով պաշարուած
նեղուիտ մարդիկը ազգային վերաշի-
նութեան համար շնորհ չունին : Խոսի
եթէ բարկանաս ու պահանջես թէ
ո՛ւր են ապա քո վերանորոգ. յառաջ-
դիմութեան վաստակը, ես կաղաչեմ
դուր մի ևս համբերես. Ժամանակը,
անպագայն, քննութիւնն և պատմու-
թիւնն այդ ամենը կ'ստուգեն թէ
խրիմեան 'ի զուր վաստակած է՞ Մը-
շոյ աշխարհին համար : վաստակեցի
այո՛, թէ շատ և թէ քիչ, և կըցան-
կայի բաղմոխտատակ լինել, բաղմա-
դիմի խոչընդոտներ քոյլերս ճնշե-
ցին ու միշտ տարաշխարհիկ վարե-
ցին : Այսօր իմ յաջորդս մտաւ 'ի
շատտակի իմ. առ այս ոչ կը սրտմը-
տիմ, ոչ կը նախանձիմ, զի այդ չար
է, ես յաշարկոտ չեմ, այլ մանաւանդ
կաղօթեմ և սրտիկ կը ցանկամ, թող
նա բաղմոխտատակ լինի ու յաջորդի
այն ամեն ձեռնարկութեանց մէջ,
որ Գլխայ վանուց և Մշոյ աշխար-
հին ժառանգ կը յաւերան :

Եւ միթէ նախանձաբեկ լինելով
ես ցա՛ւ կղզում յոյժամ ու կը շա-
ռաղուենիմ ամօթէ. քա՛ւ, ես կը
հրճուիմ և ուրախութիւն լիովին կա-
տարեալ կը լինի : Թող յառաջդիմու-
թիւնը բարդաւածի Մշոյ աշխարհին
մէջ, փոյթ չէ թէ զայն յառաջ վա-
րող ձեռքը խրիմեանին չէ :

Այլ թերեւս ունանք և դուցէ շա-
տերը զարմանօք դիտեն ու դատեն
զմեղ թէ ինչո՞ւ այսչափ սրտակոտոր
եղած եմ վշտահար կը լինիմ, կող-
քում ու չեմ հանդարտիր Տարնոյ
վանից համար, մինչդեռ թիթիկ ցաւ
անդամ չղգացի Պօլոյ Պատրիարքու-
թեան բարձր գահին ու փառաց հա-
մար : Եւ մի թէ Տարնոյ վանքը դը-
րախտ է, արքայութիւն է, հայրե-
նի սեպհական Ժամանակութիւնն է,
Ժամեկեալ դասն է և այլն : Ինչո՞ւ հա-
մար այսքան դժկամակ կը լինիմ,
ձեռքէ թողուլ չեմ ուզեր այդ չնաշ-
խարհիկ բախտը. ինչո՞ւ համար դարձ-
եալ անդէն երթալ կողքեմ այն աշ-
խարհը, որ քանիցս հալածեց զիս և
դուցէ դարձեալ հալածէ. և ինչո՞ւ
Աւետարանին աշակերտ լինելով նորա
պատուէրին չեմ հետևի՞ր՝ ոտքիս փո-
շին թօթալիկով երթալ ու հեռանալ
անընդունող քաղաքէն և այլն :

Ընդ ուրեմն խօսիմ և այդ ևս
բացատրեմ քեզ թէ ինչո՞ւ համար
կողքում : Տասնեակ տարուան Ժա-
մանակի կորստեան համար կողքում.
կուտելով, մրցելով հազիւ բարեկար-
գութեան ճանապարհ բացի, հիմը
հորդեցի ու չնքը չաւարտեցի, դու-
րա համար կողքում. դաշտադորձ մը-
շակի մը պէս քրտնահոտ վատակեցի,
յառաջդիմութեան դադարեալներու
սերմերը ցանցի, կանեն թէ չբու-
սու, ապարդիւն են, սորա համար
կողքում. հաւատարմութեամբ ծա-

ռայեցի, կանեն թէ նենգեցիր ու
կողոպտեցիր Մշոյ վանից դասն՝ ա-
ռանց հաշուական քննութեան, դու-
րա համար կողքում. Ազգային վար-
չութիւնն յիս խեղճի հայեցաւ . . .
և Մշոյ խնդրը ախրապետաբար ու
աշառելով լուծեց. ո՛հ, սորա հա-
մար առաւել կ'ողքում : Ո՛հ, Պատրի-
արքութեան համար չեմ ողբար, մի՛
առիպէք զիս, զի այդ դասը ես կա-
մովին թողի ու իմ յաջորդս վաթ-
սուն քուէով մեծ արժանաւորութե-
թեամբ բարձրացաւ նորա վերայ, և
դաւաղանք իւր տէրը դատաւ. դուրա
համար չեմ ողբար, այլ յաւէտ կը
ցնծամ ու կը մխլթարուիմ :

Այլ ևս բաւ է, շատ դիտեցի
ու շատ խօսեցայ և շատ ողբացի.
դուրա պատճառն էլ իմ վշտա-
ցած սիրան է. խօսքս դէպ 'ի ձեզ կը
գարձեմ, դու հէք վաստակական
Արծուի, վարագէն թռար 'ի Տարն
իշար, տանեկիւռ տարուան միջոցը
չատ անդամ փետտեցար, նետահար
եղար. բայց չիտակը խոստովանէ, մի-
թէ դուն էլ չիտտեցիր. քո վանա-
կան եղբայրները, որք դիտութեամբ
կամ անդիտութեամբ միշտ քո դէմ
զինեցան ու բարեկարգութեան հա-
կառակ կացին. մխլթարուէ, այդ
անցեցիդ համար թէ դու և թէ նո-
քա առ հասարակ փորձուեցայք. Դու
այսօր կը թողուս Գլխայ ուխտն ու
կերթաս, բայց քո անուն, քո յի-
շատակ, քո պտուղ պիտի կենայ Տա-
րնոյ մէջ, Հայոց պատրիարքարանի
դիւանին մէջ ու քեզ ճանաչող Հա-
յոց սրտերու մէջ :

Հաղար ութ հարիւր վաթսուն եր-
կու թուականին հանդուցեալ Տէր
Ստեփաննոս տեղապահօր օրով Ազ-
գային վարչութիւնն զքեզ 'ի Տարն
կոչեց, 1869 թուոյն Հայոց երեսփո-
խանութիւնը Տարնէն 'ի Պատրիար-
քութեան դահ հանեց, մինչդեռ քո
մոքէն բնաւ չէր անցներ. 1873 ին
Ազգին խաղաղութեան համար դու
ինքնին ազատակամ իշար այդ դա-
հէն, ձեռք մի չհագեցաւ քեզ. 1874
ներկայ թուոյն մէջ Գլխայ վանուց
վանահայրութեան պաշտօնէն կ'ուծ-
ուիս, և արդ աղաւ ու արձակեալ ես
այդ բեռնաւորեալ ծանրութենէն,
երթ 'ի խաղաղութիւն և Այլ ևս ի՞նչ
կը մնայ քեզ, թեթեւցար, թեւեղ-
ամիտիէ թուր ու քնա Մշոյ աշ-
խարհէն, Գլխայ ուխտէն. դնա՛ ու
հանգչիր քո նախկին խանձարուրին
գիւրկը. վարագայ սարէն բարձրա-
ցար, պէտք է դարձեալ նորա հո-
վանեաց տակ խոնարհիս. ա՛հ, թէ
հանգիստ թողուն քեզ. խոկա՛ միշտ,
և անցեցի վերայ խեղամուտով ԾԱ-
նի՛ր ԶԲՆԶ ԵՒ ԶՄԱՐԴԻ՛ր Այլ քո ուխ-
տին և կոչման հաւատարմի մնալով
կա՛ց դու մինչև ցիւեան

ԽՐԻՄԵԱՆ ՄԿՐՏԻԶ
Եպիսկոպոս Գլխայ վանից

... Խմբագիր .

Խորհուրդս բարեբաղդ կը համարի
զինքը նկատելով որ Ազնուազարմ Գա-
րակէօղեան գերդաստանէն հանդուցեալ
Ազնուեղի և բարեպաշտ խոր օրիորդ
կարապետեանը իւր կենդանութեան եւ
բնք հատ բուռն իր կրկնութեամբ արմե-
տում՝ որոց թիւերն են 27433, 374433
և 689637, և հինգ հատ Օսմ. լրա Պա-
լատու Ս. Հրեշտակապետ Եկեղեցւոյ Խո-
րէնեան վարժարանիս ըրած կտակն կըն-
դունի 'ի ձեռն Մեծապատիւ Գարակէօղե-
ան Գրիգոր Էփէմուսի . առ այս Խոր-
հուրդս իւր խորին շնորհակալեցը կըփու-
թայ հրապարակաւ յայտնել և յիշեալ
վարժարանի մանկանց զգացած խորին եւ
բախտալից առ նորին Ազնուազարմ Գեր-
դաստան մատուցանել :

8 Օգոստ 1874 Մնամք յարգանք
Խորհ. Ս. Հրեշտ. Ե. 'ի զիմաց Թաղ.
Կեղեցւոյ 'ի Պալատ Խորհրդոյ
Ատենադպիր Ատենապետ
Ս. Գաբրիէլեան Ս. Բաբէ՛ն
Սոթիմարեան

... Խմբագիր Մասիս սրտուա-
կան լրագրոյ .

Խնդրեմ որ ներկայ հաշուեցու-
ցակը հրատարակելու բարեհաճիք 'ի
սէր ազգասիրութեան :

Մնամք յարգանք
Ս. Գոռան

ՀԱՇՈՒՆՑՈՒՑԱԿ

Պ. Դուրեանէ Երաբարհիմ-Էմեռ Էմբոյ
Մանաշողմշ

Հրատարակեալ Զանիւք Ընթերցասիրաց Ըն-
կերութեան Իւսկիւտարու 1872 Քետր. 1

Պ Ա Ր Տ Ք

1872 Քետրվար 1	ՊՐ.
Հրատարակուած ամբողջ դրք	
983 հատոր (1)	21.626
Թերթ առ թերթ ծախուած	
1440 հատ (2)	720
Նուէր հաւաքուած գրամ (3)	1933
	24.301

ՊԱՀԱՆՁԲ

1872 Քետրվար 1	ՊՐ.
Տպագրութեան և թղթի	
ծախք (մանրամասնութեամբ)	6997
Կադմարք	1447
Տասանորդ. գրքածախի	
(մանրամասնութեամբ)	325
Այլևայլ (մանրամասնութեամբ)	105
Նուէր տրուած գրք 44 հատոր	
(մանրամասնութեամբ)	968
Պ. Գուրեանի չիրմի ծախքը	1960
" " Ընտանեաց	
Երանանուած գրք և գրամ (4)	12499
	24301

'ի Գիմաց Պ. Գուրեանի գոր-
ծոց հրատարակութեան Մաս-
նածախով անդամք

Ատենադպիր Ստենապետ
Ս. Մեղիւեան Գ. Ա. Չոպանեան
Գանձապահ Ս. Գոռան
Բ. Լաւրեան

Տեսուչ գրոց
Սեփ. Զ. Յեկեմեան
Ն. Դուրեան Թ. Աւետիսեան
Հ. Բաղդասար Գեորգ Գաբրիէլեան
1874 Օգոստոս 1
Իւսկիւտար

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՆՈՐԱՏԻՊ ՏԵՏՐԵԿ

ԹԱՏԱՐԱՐԱԿԱՆ ԹՂՈՒԱԿՈՒԹԻՒՆ

«Գեր. Սարգիս վարդապետ» թէո-
դորեան օրէ՛ի փարիզ՝ ընդ գերապայ-
ծաւ Դէորդ Հիւրմիւլ Աբբայի Մընի-
թարեան, յաղագս ճշմարտութեան
և արդարութեան վան ամբիժ հա-
ւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ եւ
վան իրաւանց օրք եւ աղքատ ման-
կանց ազգիս Հայոց հասարակաց, որ
'ի Մուրատեան վարժարանի :

Այս վերնագրէն կը տեսնուի թէ
յիշեալ տետրակն՝ որ բաղկացեալ է
'ի 23 երեսոց, բաղում ուշադրու-
թեամբ ընթերցելոյ արժանի կարեւոր

- (1) Մէն մի հատորը 1 արծաթ մէճիակ
և մէկ մէճիակը 22 դր. ի հաշուով :
- (2) Մէն մի թերթ 20 փարսյ :
- (3) Գրքին զնէն աւելի վարուած բա-
րեւէր անձանց նուէրը :
- (4) Այս դումարին համար Պ. Գուրեա-
նի ընտանեացը կողմէ ստորագրութիւն
առնուած է :
- (5) Մանրամասն տեղեկութիւն ուզողը
պէտք է դիմէ առ հաշուական Պ. Գուր-
եանի Գործոց հրատարակութեան Մաս-
նածախով :

գրուած մ'է : յորում Գեր. Թէո-
դորեան վարդապետն համառօտիւ եւ
խղճի մտօք կը պատմէ թէ ո՛րչափ
վշտալի աշխատութեամբ եւ ի՞նչ պայ-
մանաւ ստացած ու յանձնած է վե-
նետկոյ Միսիթարեան միաբանութեան
զերկմիլիոն ֆրանք հրատակն հան-
դուցեալ Սամուէլ Մուրատի, որ 'ի
Մատրոս :

Նորին գերապատուութիւնը 'կը
ծանուցանէ նաեւ թէ յիշեալ երկու
միլիոն ֆրանք հրատակն՝ մինչեւ ցարդ-
(որ 40 տարի է) չորս միլիոն ֆրանք
չահ բերած է. որով ընդ ամենայն
վեց միլիոն կընէ. ուստի հրապարա-
կաւ կը բողբք դառնապէս ընդդէմ
Միսիթարեան միաբանութեան, որ
արդարութեան սկզբանք հակառակ
վարուելով՝ կը զնայ մատակարարե-
լու զյիշեալ ազգային մեծ գումարն
յօգուտ որք եւ աղքատ մանկանց ազ-
դիս Հայոց հասարակաց, ըստ կամայ
եւ ըստ ազգասէր դիւաւորութեան
կտակագրին :

Այս կարեւոր տետրակը կը վաճա-
ռի 4 դրու չի, 'ի Զմիւռնիա՝ Արշալու-
սոյ գրատունէն՝ եւ 'ի Կ. Պօլիս Գալուսթ-
եան եղբարց գրափոխութեան խա-
նութիւն, Չաղ մաքը՛լար փողոց թիւ 16 :

ՈՒՍՈՒՆՑ

ՄԻՀՐԻՄՏ

ՈՂԵՐԳՈՒԹԻՒՆ Ի ՀԻՆԳ ԱՐԱՐՍ
Թարգմանեաց Մկրտչ Բ. Տամատեան
կը գտնուի Հայ գրափաճառաց քով
զին 5 զրուշ :

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Հմուտ եւ փորձ հայկերան մը շա-
բաթը երեք կէս օր պարսպ Ժամա-
նակ ունենալով, պատրաստ է ազգա-
յին վարժարանի մը մէջ հայերէնի,
տրամաբանութեան եւ հոգեբանու-
թեան դասախօսութիւն ընել :

Ուզողը լրագրոյս Խմբագրէն կըր-
նայ տեղեկութիւն ստանալ :

ՀԱՐԻԻՐԻՆ 25 ՁԵՂԶ

ՄԻՆԱՍԵՆ ԵՒ ԸՆԿԵՐԵՑ

ՆՈՐԱԿԱՌՈՅՑ

ԱՄԵՐԻԿԱՆ ՎԱՃԱՌԱՏԱՆ ԲԱՑՈՒՐԸ

Ս. Մ. Մինասեան եւ ընկերք պա-
տիւ կը համարին ծանուցանել արդոյ
հասարակութեան, որ իրենց Ամերիկե-
ան վաճառատունը՝ վերադին կա-
ռուցուելով մօտեւաւ բացուեցաւ, եւ
այն առթիւ իրենց բոլոր վաճառք-
ները զեղչով պիտի ծախուին սկսեալ
օգոստ. 8 20էն մինչեւ 18/30 սեպտեմ-
բեր. ուստի հասարակութիւնը յար-
գանօք կը հրաւիրուի այս պատեհու-
թեան օգուտ քաղելու :

Կարի գործիք՝ Սոպա եւ երկաթ
խողովակներու գիներէն միայն հար-
իւրին 10 դեղչ պիտի ըլլայ :

Բոլոր միւս վաճառաց գիներէն
հարիւրին 25 դեղչ պիտի ըլլայ :

Ամերիկեան վաճառատուն
ճամի գարուսի Ղալաթիւս

3

ԻԼԵՆ

Շիրքէթի Խայրիյէ վաթորարը ի-
չին լիւղումու օրան պլիթէթ վէ Էլիւրադը
սայիրէ պլի միւնադ ասա թապ իթ-
տիրիլէճէկի ճիհէթ իլէ թալիպ օլան-
լէր իշ պու շէհր օգոստոսուն սէքի-
զինճի բէրշէմպէ կիւնիւնաէն իթի-
պարէն պէհէր բէրշէմպէ վէ բաղար
թրթէսի կիւնիլէր Շիրքէթի Խայրիյէ
խտարէ մէճիլիլէն կէլմէլիլի իլան օ-
լունուր :

